



**«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ**

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔ**

Հետազոտության թեման՝ *Բանավոր խոսքի զարգացումը կրտսեր դպրոցում*

Առարկան՝ *դասվար*

Հետազոտող ուսուցիչ՝ *Հասմիկ Խաչատրյան*

Ուսումնական հաստատություն՝ *ՀՀ Արագածոտն մարզի Ագարակի Տ.*

*Թերլեմեզյանի անվան միջնակարգ դպրոց*

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Աշխատանքի նպատակն ու խնդիրները
2. Կրտսեր դպրոցականների բանավոր խոսքի զարգացման առանձնահատկությունները
3. Կրտսեր դպրոցականների բանավոր խոսքի զարգացման առանձնահատկությունները
4. Կրտսեր դպրոցականների բանավոր խոսքի զարգացման սկզբունքներն ու մեթոդները
5. Հետազոտական աշխատանք դասի պլան
6. Եզրակացություն
7. Օգտագործված գրականության ցանկ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Թեմայի արդիականությունը:** Երեխայի խոսքի զարգացումը տարրական դասարաններում մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկն է: Խոսքի զարգացման շնորհիվ է տեղի ունենում կրտսեր դպրոցականի սոցիալականացումը, հոգեկան զարգացումը, մտածողության զարգացումը: Խոսքի զարգացման խնդիրներից առավել կարևորվում են երեխաների կապակցված խոսքի զարգացումը, քանի որ կապակցված խոսքը մտավոր գործունեության բարձրագույն ձևն է և դրա զարգացման աստիճանով որոշվում է երեխայի խոսքային և մտավոր զարգացման մակարդակը:

Արդի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց երեխաների առօրյայի անբաժան մասն են կազմում համակարգիչները, համակարգչային խաղերը, որոնք չեն ուղեկցվում խոսքային հաղորդակցմամբ: Կրտսեր դպրոցական տարիքի երեխաները մեծ դժվարություններ են ունենում շփման, հաղորդակցման գործընթացում, նրանք հաճախ խոսում են առանց զգացմունքայնության, նրանց մոտ գրեթե բացակայում են գիտական խոսքի մշակույթի նորմերին ու օրինաչափություններին համապատասխան խոսքը:

Մեր մանկավարժական պրակտիկաների հետազոտությունների արդյունքում պարզեցինք, որ դասվարների շատ քիչ մասն է դասի անցկացումը հիմնում երեխաների բանավոր խոսքի զարգացման վրա: Դասի ամբողջ ընթացքը պետք է միտված լինի երեխաների բանավոր խոսքի զարգացմանը:

Մեր օրերում դժվար է հանդիպել երեխայի, որը լիարժեք զարգացած կապակցված խոսք ունենա, կարողանա անկաշկանդ և գրագետ հաղորդակցվել, բանավոր խոսքը լինի ճկուն, սահուն և անսխալ: Վերը նշված հարցերի լուծման անհրաժեշտությունից էլ բխում է խնդրի արդիականությունը:

**Աշխատանքի նպատակն ու խնդիրները:** Հետազատության նպատակն է բացահայտել կրտսեր դպրոցականի բանավոր խոսքի զարգացման մեթոդական հիմքերը, ձևաբանական իրողություններ ուսումնասիրելիս, հիմնավորել դրանց իրականացման մանկավարժական պայմանները:

Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել կրտսեր դպրոցականների բանավոր խոսքի զարգացման մակարդակը, բանավոր խոսքում առաջ եկած դժվարությունները:
- Բացահայտել և ներկայացնել ձևաբանական իրողությունների ուսումնասիրության դերը բանավոր խոսքի զարգացման մեջ:

• Ներկայացնել կրտսեր դպրոցականի բանավոր խոսքի զարգացման սկզբունքներն ու մեթոդները:


- Ուսումնասիրել կրտսեր դպրոցականների ձևաբանական գիտելիքների մակարդակը:
- Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը:** Մեր աշխատանքը կազմված է երկու գլխից, իրենց համապատասխան ենթազույգներից, գործնական աշխատանքից, եզրակացությունիցև օգտագործված գրականության ցանկից:

Առաջին գլխում ներկայացված է բանավոր խոսքի զարգացման նշանակությունը տարրական դպրոցում, կրտսեր դպրոցականների բանավոր խոսքի զարգացման առանձնահատկությունները, խոսվում է նաև երեխաների բանավոր խոսքի զարգացմանը նպաստող իրողությունների մասին, ներկայացված է նաև կրտսեր դպրոցականի բանավոր խոսքի զարգացման սկզբունքներն ու մեթոդները:

Երկրորդ գլխում ներկայացված է բանավոր խոսքի զարգացման մեջ ձևաբանական իրողությունների ուսումնասիրության դերը, կրտսեր դպրոցականների ձևաբանական գիտելիքների մակարդակը: Ներգրավել ենք նաև տարրական դասարանների երեխաների համար նախատեսված մի քանի խաղային օրինակներ, որոնք միտված են ձևաբանական իրողությունների ճանաչման, տարբերակման, ճիշտ օգտագործման ճանապարհով երեխաների բանավոր խոսքի զարգացմանը:

## ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանավոր խոսքի ուսուցումը կարելի է համարել լեզվի ուսուցման առաջնահերթ և ամենակարևոր խնդիրներից, ինչպես նաև այն ընդհանուր ուսուցման հիմնաքարն ու չափանիշներից մեկն է: Աշակերտի բանավոր խոսքի զարգացումը մայրենի լեզվի դասավանդման ամենակենտրոնական հարցերից է: «Մտքի հարստության համար անհրաժեշտ է խոսքի հարստություն: Խոսքը կառուցվում է բառապաշարով, ժողովրդական աֆորիզմներով ու դարձվածքներով, քերականական ձևերով, ոճական հնարքներով»: Մեր մանկավարժական պրակտիկայի ընթացքում բացահայտեցինք, որ նամանավանդ տարրական դասարանների աշակերտները գրական լեզվի նորմերին համապատասխան բանավոր խոսք կառուցելիս թերանում են: Ըստ մեր ուսումնասիրությունների՝ տարրական դասարանների աշակերտների մոտ 70 տոկոսը դժվարանում են գրական հայերենով խոսելիս:



Այստեղ առաջին հերթին հաղորդակցման խնդիրն է: Ուսուցման ընթացքում հատուկ ուշադրության է արժանիվերոնշյալ խնդիրը, այնուհետև պետք է աշխատել երեխաների ինքնուրույն մտածողությանն երևակայության զարգացման վրա: Կարևոր է նաև բանավոր խոսքի մաքրության հարցը հենց ուսուցմառության սկզբից: Այն պիտի կառուցված լինի գրական լեզվի օրինաչափություններին համապատասխան գերծօտարաբանություններից, բարբառայնությունից: «Հայ բարբառները, ինչպես գրաբարը, անփոխարինելի աղբյուր են եղել և մնում են մեր գրական աշխարհաբարի բառապաշարի, ոճական ձևերի, դարձվածքների հարստացման համար և գրական լեզուն միշտ օգտվել է ու պիտի օգտվի այդ աղբյուրից»<sup>2</sup>: Սակայն անհրաժեշտ է ընտրողաբար օգտվել այդ աղբյուրից:

Պրոֆեսոր Ա. Տեր-Գրիգորյանը նշում էր, որ աշակերտի խոսքը ձևավորվում է երեք օջախներում՝ տանը, դպրոցում և հասարակական միջավայրում: Նայած թե երեխան խոսքային ինչպիսի միջավայրում է մեծանում, ինչ էլ լսում նա իր մեծերից տանը, փողոցում, կինոյում, թատրոնում, ըստ այդմ էլ ձևավորվում է նրա խոսքը: Գաղտնիք չէ, որ շրջապատից հաճախ երեխայի խոսք են թափանցում գրական լեզվում չընդունված բառեր ու արտահայտություններ, և դպրոցում պետք է ուղիներ փնտրել այդ խնդիրները մանկավարժորեն լուծելու համար: Հասարակական միջավայրում մաքուր գրական լեզվի համարպայքարն ունի համընդհանուր նշանակություն: Իսկ հասարակական միջավայրի մարդիկ երեկվա երեխաներն են, ուրեմն պիտի սկսել երեխաներից: Տանը, դպրոցում, ամենուրեք պիտի հետևողական ու կազմակերպված աշխատանք տանել երեխայի խոսքի զարգացման ուղղությամբ: Չպետք է մոռանալ, որ երեխայի լեզվական գիտելիքներով է պայմանավորված նաև մյուս առարկաների հաջող ուսումնասիրումը: Խոսքի զարգացման համար երեխայի կրտսեր դպրոցական տարիքը անփոխարինելի մի ժամանակաշրջան է: «Այս տարիքում երեխան, երբեմն իր համար էլ աննկատելի կերպով, հազարավոր նոր բառեր, արտահայտություններ է սովորում, ընկալում է լեզվի այն հիմնական ատաղձն ու յուրահատկությունները, որը հաճախ շատ մեծ ջանքերի գնով է հաջողվում չափահաս մարդկանց»: Դասավանդման ընթացքում այս հանգամանքը պետք է հաշվի առնի ուսուցիչը և տարրական դասարանները դարձնի երեխայի խոսքի զարգացման հիմնական օղակ, մայրենի լեզվի բառապաշարի հիմնական ֆոնդի ուսուցման ժամանակաշրջան: Առհասարակ ուսուցման ողջ համակարգի նպատակը երեխայի ընդհանուր զարգացումն է, որն առաջին հերթին իրականացվում է խոսքի միջոցով և արտահայտվում է խոսքի մեջ: Հենց այդ առումով էլ աշակերտի խոսքի զարգացումը մայրենի լեզվի տարրական դասընթացի կարևորագույն խնդիրներից մեկը պետք է դարձնել:

Տարրական դասարանի աշակերտների բանավոր խոսքի զարգացման համար բացառիկ կարևոր ուղենշային դեր ունի ուսուցչի խոսքը, որը դիտվում է իբրև կենդանի, զարգացող ու ծավալվող, երեխայի հոգու հետ հաղորդակցվող, նրա հետաքրքրություններին ու որոնումներին բավարարություն տվող խոսք, որովհետև բնական ձևով արտասանվող կենդանի ու անմիջական խոսքնավելի խորն է ազդում մարդու վրա, քան կարդացածը: Ընդ որում, Ջ. Գյուլամիրյանը, կարևորելով այս հարցը, գրում է, որ տարրական դասարաններում մայրենի լեզվի դասերին պետք է խուսափել տեսական կանոնների և սահմանումների, քերականական իրողությունների բերանացի շարադրումից, որոնք աշակերտներից պահանջում են միայն լսել, ընկալել և նույնությամբ վերարտադրել:

Բանավոր խոսքի զարգացմանը մեծապես նպաստում է նկարների բովանդակության վերարտադրումը: Նկարները, մանավանդ երբ դրանք գունավոր են, շատ վառ տպավորություն են թողնում երեխաների վրա: Այս առումով առաջին դասարանից սկսած մայրենի լեզվի ուսուցման ընթացքում շատ մեծ տեղ պետք է տալ նկարների օգտագործմանը, որովհետև նկարները նպաստում են երեխայի տարածական ըմբռնումների, պատկերացումների ու խոսքի զարգացմանը: Օրինակ՝ առաջին դասարանի դասագրքերը համարյա ամբողջությամբ հիմնված են այս հիմքի վրա՝ յուրաքանչյուր էջի

Վրա կան նկարներ, որոնք երեխաները պետք է վերարտադրեն:



◆ Հորինի՛ր պատմություն նկարի շուրջ:

Երեխաները նկարի բովանդակությունը գեղեցիկ կերպով վերարտադրում են, ամեն մեկը յուրովի և շատ արդյունավետ կլինի լրացուցիչ առաջադրանքներ տալ նկարի վերաբերյալ: Օրինակ՝

◆ Տվյալ պատմությունից դուրս գրի՛ր առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառերը:

◆ Տվյալ բառերից մի քանիսով կազմի՛ր նախադասություններ:

◆ Բնագրից գտի՛ր գործողություն ցույց տվող բառեր: Վերափոխի՛ր ըստ նմուշի:

Հասնում է – հասավ

Տեսնում էր – տեսավ

Երեխաների բանավոր խոսքի զարգացմանը նպաստում է նաև հեքիաթներ պատմելը:

Երեխաները չափազանց շատ են սիրում հեքիաթներ, մեծ ուրախությամբ ու հաճույքով են պատմում իրենց լսած ու կարդացած հեքիաթները: Այս բանը պետք է օգտագործել աշակերտների բանավոր խոսքը զարգացնելու կատարելագործելու համար: Երեխաներին շատ հաճախակի հնարավորություն պետք է տալ իրենց իմացած հեքիաթները բարձրաձայն պատմելու: Դասագրքից անցած մի հեքիաթ պետք է առիթ տա համանման բազմաթիվ այլ հեքիաթներ պատմելու, տարբեր ձևերով դրանք վերստին ու վերստին վերարտադրել տալու, որովհետև դա մեծապես նպաստում է երեխաների մեջ պատմելու կարողության զարգացմանը, հղկում ու կատարելագործում է նրանց բանավոր խոսքը:

Չափազանց կարևոր է երեխաների մեջ սկզբից նեթ մշակել սեփական խոսք կառուցելու կարողություն, լեզվական ճաշակ ու լեզվազգացողություն, իսկ դրա համար պետք է միշտ ազատություն տալ երեխային մտածելու և խոսելու՝ հետևելով նրա խոսքի գրագիտական ճշտությանը:

## 1.2 ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հանրահայտ է, որ արդյունավետ ուսուցում կազմակերպելու և աշակերտների բանավոր խոսքը զարգացնելու հարցում մեծ նշանակություն ունի խոսքի զարգացման սկզբունքների ու մեթոդների իմացությունն ու համապատասխան գործադրումը:

Խոսքի զարգացման հիմնական սկզբունքներից է խոսքի և մտածողության միասնությունը, բանավորի և գրավոր խոսքի փոխադարձ կապը:

Դիդակտիկայի հայտնի սկզբունքներից է ուսուցման կապը կյանքի հետ: «Աշակերտների իմացությունը չի կարող սահմանափակվել տեսական ուսուցմամբ, այլ ձեռք բերած գիտելիքները պետք է ստանան պրակտիկ գործադրություն: Ուրեմն, ուսուցումը կապել կյանքի հետ, նշանակում է սովորել կյանքից և սովորել կյանքի համար»:<sup>8</sup>

Հիմնական սկզբունք է համարվում ուսուցման դաստիարակող և զարգացնող բնույթը: Այս սկզբունքի կիրառումը պահանջում է ներդաշնականորեն զուգակցել ուսուցումն ու դաստիարակությունը: Մարդու գաղափարական դաստիարակությունն առաջին հերթին իրականացնում է հանրակրթական դպրոցը: Դպրոցական ամեն մի առարկայի դասավանդում, ուսուցողական նպատակներից բացի, հետապնդում է նաև դաստիարակչական լուրջ խնդիրներ: Հարցն այն է, որ մայրենի լեզվի դասավանդումը զուտ ուսուցողական բնույթ չկրի, այլ քերականական գիտելիքների հաղորդումից բացի աշակերտների մեջ մշակվեն գեղագիտական ճաշակ և բարոյական նորմեր: Այդ թերությունը բացատրվում է նրանով, որ հաճախ լեզվական-քերականական կանոնները ուսումնասիրվում են ձևի տեսանկյունից՝ երբեմն ետին պլան մղելով բովանդակությունը: Քերականական կանոնները անհրաժեշտ է դիտել գեղարվեստական, պատմական, հրապարակախոսական բնույթի ստեղծագործություններից վերցրած դիդակտիկ նյութերի վրա: Ուրեմն, քերականության ուսուցումը պետք է կենդանացնել կյանքից վերցված բազմակողմանի ու հետաքրքիր օրինակներով: Իսկ այսօր այդ օրինակները շատ են, մեր բազմաբեղուն ու ստեղծագործ առօրյան, պատմական մեծ իրադարձությունները, գիտատեխնիկական նորագույն հայտնագործությունները, հիշարժան օրերն ու տարելիցները, նույնիսկ մեր կյանքի սովերոտ կողմերն ու ակնառու թերությունները առատ նյութ են տալիս ուսուցման պրոցեսը ավելի հետաքրքիր ու բովանդակալից դարձնելու:

Օրինակ գոյականը որպես խոսքի մաս ուսուցանելու ժամանակ ուսուցիչը կարող է դասարան բերել տարբեր առարկաներ՝ պատրաստված տարբեր նյութերից (օր.

խաղալիք, բաժակ, քար, ճյուղ, խնձոր, նկար և այլն) և բացատրելու հետ զուգընթաց ցույց տա, որ գոյականներն այն խոսքի մասերն են, որոնց կարելի է տեսնել, ձեռք տալ, շոշափել, զգալ: Սա օգնում է երեխաներին ավելի մատչելի ու հասկանալի ձևով բացատրել նյութը և երեխաները այսպես ավելի լավ են պատկերացում կազմում տվյալ քերականական իրողության վերաբերյալ:

Դասարան 4-րդ

Դասի թեման «Հարստություն»

Դասի նպատակը 1. Վերհիշել նախորդ դասարանում անցած գիտելիքները «բառ» «բառիմաստ» հասկացությունների վերաբերյալ:

2. Ամրապնդել խոսքի մասերի վերաբերյալ ունեցած գիտելիքները, կարողանալ խմբավորել դրանք ըստ համապատասխան սյունակների:

2. Մեփական բառերով վերարտադրել բնագրի բովանդակությունը:

3. Ենթադրություններ անել ընթերցանությունից հետո՝ հաստատելով կամ վերանայելով դրանք:

4. Կարող լինել նկարագրական բնույթի հարցերի վերաբերյալ:

Դասի կահավորումը՝ 1. Միլվա Կապուտիկյանի մեծադիր նկար: 2. Պաստառ:

Դասի ընթացքը՝ Խթանման փուլ

Ուսուցիչը հարց է տալիս, թե ինչ գիտեն Միլվա Կապուտիկյանի մասին, նրա մանկական որ ստեղծագործություններին են ծանոթ: Ուսուցչի ուղղորդմամբ վերհիշում են նախորդ դասարաններում մանցած՝ «Կարծում եք, թե կատա՞կ է», «Ավոյի ծիլը» ստեղծագործությունները: Ուսուցիչը ներկայացնում է Կապուտիկյան մանկագրին (նա իր առաջին բանաստեղծությունը գրել է 13 տարեկան հասակում և տպագրել «Պիոներ կանչ» թերթում: Ստեղծագործելով դեռևս դպրոցական տարիներից՝ հետագայում դարձել է համարձակ ու ազնիվ հայրենասեր բանաստեղծ, գրող ու թարգմանիչ՝ տպագրելով մոտ 70 գիրք): Միլվա Կապուտիկյանը մանուկների լավ բարեկամն էր, նրանց համար գրել է գրքեր՝ «Փոքրի՛կ Արա, ականջ արա», «Տանը, բակում, փողոցում», «Մեր Լալիկը, սիրունիկ», «Մի տարով էլ մեծացանք» (կարելի է դասարանի մի անկյունում բացել Միլվա Կապուտիկյանի վերոնշյալ գրքերի ցուցահանդես և հնարավորություն ընձեռել սովորողներին դիտելու գրքերի շապիկները, թերթելու առանձին էջեր, մտաբերելու իրենց իմացած ստեղծագործությունները հետևյալ հարցերի միջոցով. ինչի՞ մասին էին դրանք, ովքե՞ր էին հերոսները, ինչո՞ւ էին դրանք հետաքրքիր և այլն): Նրա բանաստեղծությունները մեզ ուղեկցում են մանկապարտեզից մինչև հասուն տարիք: Այժմ կընթերցենք մի ստեղծագործություն, որը ևս գրել է Միլվա Կապուտիկյանը, և որի միջոցով կարող ենք բացահայտել Կապուտիկյան մարդուն: Նախքան նյութը ընթերցելը ուսուցիչը կարող է օգտագործել «Մտագրոհ» մեթոդական հնարը: Նա գրատախտակին գրում է հարստություն բառը և երեխաներին առաջադրում մտագրոհով թվարկել, թե ըստ իրենց ի՞նչ է հարստությունը, ի՞նչ հարստություններ գիտեն: Սովորողների արտահայտած առաջին մտքերը ուսուցիչը գրում է գրատախտակին:

Իմաստի ընկալման փուլ

Բնագիրը ընթերցելուց հետո կատարում են բառային աշխատանք նորածանոթ բառերին արտահայտությունների իմաստների ճշգրտում և բացատրություն. դարսել, անհաս, բարձունք, թովքեր, գալիք: Այնուհետև պատասխանում են վերը նշված հարցերին:

.Ի՞նչ է ուզում հեղինակն ասել թևեր անտես արտահայտությամբ:

.Անհաս բարձունք արտահայտության մեջ անհաս բառն ի՞նչ բառով կփոխարինեք:

.Ինչու՞ է հեղինակը գրքին հույս, ընկեր, կյանք ու գալիք համարում:

.Նոր աշխարհներ կտանի քեզ տողի մեջ, քո կարծիքով, աշխարհ բառն ի՞նչ իմաստով է գործածվել:

Ուսուցումը ավելի արդյունավետ կլինի, եթե ուղեկցվի խաղերով:

Ներկայացնենք տարրական դասարանների երեխաների համար նախատեսված մի քանի խաղային օրինակներ, որոնք միտված են ձևաբանական իրողությունների ճանաչման, տարբերակման, ճիշտ օգտագործման ճանապարհով երեխաների բանավոր խոսքի զարգացմանը:

◆ Խաղ - «Ճիշտ ընտրություն»<sup>15</sup>

Նպատակը - Օգնում է տարբերակելու առարկա, առարկայի հատկանիշն գործողություն ցույց տվող բառերը, բառապաշարի հարստացմանը, համագործակցելու կարողությանը և մանր մոտորիկայի զարգացմանը:

Օգտագործվող նյութեր - Թուղթ, սոսինձ, ծրար

Ուղեցույց - Երեխաներին տրվում են ծրար, մեծ թուղթ և սոսինձ: Ծրարում դրված 25 թերթիկների վրա գրված են բառեր՝ գոյականներ, ածականներ, բայեր:

Մեծ թղթի վերևում գրված են առարկա, առարկայի հատկանիշ, գործողություն ցույց տվող բառեր: Երեխաները պետք է ծրարից հանեն և թղթի վրա համապատասխանաբար ստանձե այդ բառերը:

Բառերի ընտրությունը պետք է համապատասխանի երեխայի կարողություններին: Խաղը նպատակահարմար է կիրառել խմբային աշխատանքների ժամանակ: Հաղթում է նա, ով ճիշտ է կատարում:

Անուն/ազգանուն	Մասնակցություն	Հարցերի առաջադրում	Առաջարկի ներկայացում
Գրիգորյան Գոռ	այո	Ինչ, ինչեր, ինչ անել	
Օզմանյան Աննա	այո	ինչպես	

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (ԴԱՍԻ ՊԼԱՆ)

Դասարան՝ 4-րդ

Առարկա՝ Մայրենի լեզու

Թեմա՝ Բանավոր խոսքի զարգացումը ձևաբանական իրողություններ ուսումնասիրելիս:

Դասի տևողությունը՝ 45 րոպե


Դասի նպատակը՝ Երեխաների ձևաբանական գիտելիքների ստուգում, ունեցած գիտելիքների ամրապնդում, լեզվական մտածողության զարգացում:

Կիրառվող մեթոդները՝ Ներածական գրույց, խթանող հարցեր, մտազրոհ, խմբային աշխատանք, վերլուծություն, խմբավորում, քարտային աշխատանք, ցուցադրական-բացատրական մեթոդ:

Ուսումնական նյութերը՝ Դասագիրք, աղյուսակներ, գծապատկերներ, տետրգրիչ, գունավոր թղթեր, նկարներ, քարտեր:

Դասի ընթացքը, խթանման փուլ, տևողությունը՝ 10 րոպե

Դասի սկզբում ուսուցիչը ստուգում է տնային առաջադրանքը, անցում կատարում խոսքի մասեր (գոյական, ածական, բայ) թեմայի ամրապնդմանը և ամրակայմանը: Նախքան նյութին վերաբերող առաջադրանքներին անցնելը, վերհիշում են, թե որոնք են գոյականները, ածականները, բայերը:



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով մեր առաջադիր խնդիրները՝ հանգել ենք հետևյալ եզրահանգումների.

• Տարրական դասարանների աշակերտների խոսքը այնքան էլ զարգացած չէ, խոսքում շատ են գրական նորմերին անհամապատասխան բառերն ու արտահայտությունները: Կրտսեր դպրոցականները գրական հայերով հաղորդակցվելիս շատ են կաշկանդվում, և հարկավոր է մղել նրանց ազատ արտահայտման, հաղորդակցման:

• Ուսուցումը պետք է անպայմանորեն կապել կյանքի հետ, որպեսզի երեխաներին մատչելի ու հասկանալի լինի բացատրվելիք նյութը: Պետք է օրինակները վերցնել երեխայի կենցաղից, շրջապատող իրականությունից: Ուսուցումը պետք է նաև զուգակցել դաստիարակության հետ, երեխաների մեջ մշակել բարոյական և գեղագիտական նորմեր:

Աշակերտների խոսքի զարգացումը հաջող կազմակերպելու համար անհրաժեշտ է նաև ուսուցման մեթոդների ճիշտ ընտրություն և գործադրում: Ըստ այսմ, առանձնացրել են մի շարք առաջադրանքներ, որոնք, մեր կարծիքով, արդյունավետ են բանավոր խոսքի զարգացման և ձևաբանական գիտելիքների ամրակայման համար: Օրինակ՝

♦ Կազմի՝ ը այնպիսի նախադասություններ, որ հետևյալ բառերը մի դեպքում լինեն գոյական, մյուս դեպքում՝ ածական:

Մուտասան, առաջնորդ, իմաստուն, գիտնական, բժիշկ:

♦ Կազմի՝ ը մի նախադասություն ինչպիսի՞, ո՞վ, ի՞նչ է անում, որտե՞ղ հարցերին միջոցով:

♦ Առարկա և գործողություն ցույց տվող բառերով կազմի՝ ը նախադասություններ:

Կռունկ, աղջիկ, հայրիկ, որսորդ

Խղճալ, թռչել, կրակել, խնամել:

♦ Միևնույն գոյականի համար ընտրի՝ ը համապատասխան մի քանի բայ:

Շուն, ջուր, երեխա, ծառ, հերոս, տերև:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2009, «Զանգակ» հրատ., էջեր 352:
2. Գյուլամիրյան Ջ., Խաղալով սովորենք, Երևան, 2009, «Զանգակ» հրատ., էջեր 80:
3. Գյուլբուդաղյան Վ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1987, ԵՊՀ հրատ., էջեր 326:
4. Խաչատրյան Գ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Գյումրի, 2008, էջեր 202:
5. Հովսեփյան Ս., Աբրահամյան Լ. և ուրիշներ, Խաղանք և սովորենք, Երևան, 2016, «Արմավ» հրատ., էջեր 118:
6. Ղարիբյան Ար., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1947, էջեր 460:
7. Մանուկյան Ա., Խոսքի զարգացման մեթոդիկա: (IV-VIII դասարանների ուսուցիչների համար), Երևան, 1976, «Լույս» հրատ., էջեր 348: